ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2025 թվականի N 1080

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՌՈՄԻԿ ԱԹԱԲԵԿՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ռոմիկ Աթաբեկյանի 2025 թվականի սեպտեմբերի 18-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով և Ստեփանավան համայնքի ավագանու 24.12.2024թ. թիվ 131-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ***.

1. Ստեփանավան համայնքի Մ.Պապյան փողոց թիվ 10 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Ռոմիկ Աթաբեկյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն ընթացիկ տարվա չորրորդ եռամսյակի համար՝ 01.10.2025-31.12.2025թթ.:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման, առևտրի սպասարկման, տրանսպորտի և գովազդի բաժնին տուրքերի գանձումները կատարել ըստ գործող կարգի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2025 թվականի N 1081

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, ՔԱՂԱՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՐԱՖՖԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 16Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարլեն Մկրտիչի Հարությունյանի կողմից 10.09.2025թ. ներկայացված 2109 դիմումը, 29.04.2005թ. տրված թիվ 1243530 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին քաղվածքը՝ ծածկագիր 06011C7JJGXT ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, քաղաք Ստեփանավան Ռաֆֆի փողոց թիվ 16ա հասցեում գտնվող անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, քաղաք Ստեփանավան Ռաֆֆու փողոց 52 բնակելի տուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2025 թվականի N 1082

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, ՔԱՂԱՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 42Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Թամարա Թորգոմի Պապիկյանի կողմից 18.08.2025թ. ներկայացված 1889 դիմումը, 12.09.2005թ. տրված թիվ 2137455 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը «Սամվել Ֆրանգյան Կամսարի» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին քաղվածքը՝ ծածկագիր 06011RQQJKKC ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, քաղաք Ստեփանավան Երիտասարդական փողոց թիվ 42ա հասցեում գտնվող անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, քաղաք Ստեփանավան Արևելյան փողոց 61 ավտոտնակ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 սեպտեմբերի 2025 թվականի N 1083

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 18 ՄԱՅԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 171 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Եվրոպական հանձնաժողովի «Քաղաքապետների դաշնագիր» նախաձեռնությանը միանալու մասին Ստեփանավան համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 17-ի թիվ 57-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքում էներգետիկ կառավարման համակարգ (այսուհետ նաև՝ ՀԷԿՀ) ներդնելու, համայնքապետարանի ենթակայության ընկերությունների/կազմակերպությունների օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացման միջոցառումները համակարգելու, հարմարավետությունն անհրաժեշտ մակարդակի բերելու, էներգաարդյունավետության ներուժը գնահատելու, վառելիքաէներգետիկ ռեսուրսների և ջրի սպառումը վերահսկելու, ինչպես նաև մոնիտորինգ իրականացնելու նպատակով ստեղծել էներգետիկ կառավարումը համակարգող աշխատանքային խումբ:
2. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի էներգետիկ կառավարումը համակարգող աշխատանքային խմբի (այսուհետ նաև՝ Աշխատանքային խումբ) կազմը՝ համաձայն հավելված 1-ի:
3. Հաստատել Աշխատանքային խմբի աշխատակարգը՝ համաձայն հավելված 2-ի:

4. ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի էներգետիկ կառավարչի պարտականությունները հանձնարարել Ստեփանավանի համայնքապետարանի էներգետիկ կառավարիչ Արման Սուքիասյանին:
5. ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների՝ «Ստեփանավանի Սոս Սարգսյանի անվան մշակույթի պալատ», «Ստեփանավանի Արթուր Ղարիբյանի անվան արվեստի դպրոց», «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի մանկապատանեկան մարզադպրոց և ժամանցային կենտրոն», «Ստեփանավանի քաղաքային գրադարան», «Ստեփանավան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում», «Ստեփանավանի թիվ 1 մսուր-մանկապարտեզ», «Ստեփանավանի թիվ 2 մանկապարտեզ», «Ստեփանավանի թիվ 3 մանկապարտեզ», «Ստեփանավանի թիվ 4 մանկապարտեզ», «Ստեփանավանի Ամալյա Կարապետյանի անվան թիվ 5 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ների տնօրեններին, Ուրասար, Արմանիս, Կաթնաղբյուր բնակավայրերի վարչական ղեկավարներին, Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին նշանակել պատասխանատու պաշտոնատար անձինք ՀԷԿՀ կայացմանը օժանդակելու, իրենց ղեկավարած կազմակերպությունների էներգաարդյունավետության միջոցառումների իրականացումն ու վառելիքաէներգետիկ ռեսուրսների, ջրի սպառման ծավալների և արժեքի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, ներբեռնումը կամ տրամադրումն ապահովելու համար (այսուհետ՝ պատասխանատու անձինք):
6. Սահմանել համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից վառելիքաէներգետիկ ռեսուրսների, ջրի սպառման ծավալների և արժեքների, ինչպես նաև շենք-շինությունների տեխնիկական և էներգետիկ տվյալների ու ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և համայնքապետարան փոխանցման եղանակը՝ էլեկտրոնային, էներգիայի կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով կամ առձեռն:
7. Պատասխանատու անձանց խմբագրելի էլեկտրոնային ձևաչափով ապահովել օբյեկտի (շենք-շինությունների) տեղեկատվական քարտի լրացումը՝ ըստ պատասխանատվության ոլորտների և էլեկտրոնային ձևով ներկայացնել Ստեփանավանի համայնքապետարան՝ էներգետիկ կառավարչին:
8. Ուժը կորցրած ճանաչել Ստեփանավան համայնքի ղեկավարի 2020 թվականի մայիսի 18-ի թիվ 171 որոշումը:
9. Սույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հասմիկ Մովսիսյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված 1
ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան
համայնքի ղեկավարի 2025 թվականի
սեպտեմբերի 22 թիվ 1083 որոշման

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Աշխատանքային խմբի ղեկավար՝
ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

Աշխատանքային խմբի անդամներ՝
ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության,հողաշինության և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ
«Ստեփանավան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրեն,
ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,
ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, առողջության, սոցիալական աջակցության և տուրիզմի բաժնի պետ:

Հավելված 2
ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան
համայնքի ղեկավարի 2025 թվականի
սեպտեմբերի 22 թիվ 1083 որոշման

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

Աշխատանքային խումբը համակարգում է ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի էներգետիկ կառավարման համակարգի ներդրման և իրականացման գործընթացները, աշխատանքային խմբի նիստերի անցկացման ժամկետները, վայրը և ձևաչափը սահմանում է աշխատանքային խմբի ղեկավարը:

Աշխատանքային խումբն իր աշխատանքներն իրականացնելու նպատակով կազմակերպում է քննարկումներ, տալիս համաձայնություններ և հանձնարարականներ, ներկայացնում առաջարկներ, հաստատում աշխատանքային ծրագրերը, ընտրվող չափորոշիչներն ու մեթոդաբանությունները և այլ կառուցակարգերը:

Հաստատում է Ստեփանավան համայնքում էներգետիկ կառավարման համակարգի ներդրման և իրականացման աշխատանքային ծրագիրը:

Հաստատում է Ստեփանավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների շենքերի ու շինությունների և այլ ենթակառուցվածքների ցանկը, որտեղ ներդրվելու և իրականացվելու է էներգետիկ կառավարումը:

Հաստատում է Ստեփանավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների շենքերի ջերմատեխնիկական ցուցանիշների շտեմարանի կազմման չափորոշիչները:

Հաստատում է արդիականացման, հիմնանորոգման և վերակառուցման ենթակա շենքերի և շինությունների առաջնահերթության սահմանման մեթոդաբանությունը կամ կարգը:

Ըստ անհրաժեշտության նախաձեռնում է ներքին քննարկումներ և տալիս ցուցումներ կազմակերպելու համապատասխան դասընթացներ, սեմինարներ, աշխատաժողովներ, ուսումնական այցեր էներգետիկ կառավարչի և Ստեփանավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների մասնակցությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 սեպտեմբերի 2025 թվականի N 1084

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, ՔԱՂԱՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԱՐԵԼԵՅԱՆ ՓՈՂՈՑ 61 ՀԱՍՑԵԻ, 12.09.2005Թ. ԹԻՎ 2137455 ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ (ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ) ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ, ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ, ԾԱԾԿԱԳԻՐԸ ԵՎ ՄԱԿԵՐԵՍԸ ՃՇՏԵԼՈՒ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՃՇՏՎԱԾ ՏԵՂԱԴԻՐՔՈՎ, ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐՈՎ, ԾԱԾԿԱԳՐՈՎ ԵՎ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Թամարա Թորգոմի Պապիկյանի կողմից 18.08.2025թ. ներկայացված 1889 դիմումը, 12.09.2005թ. թիվ 2137455 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականը, Ստեփանավան քաղաքի կադաստրային քարտեզը, «Սամվել Ֆրանգյան Կամսարի» ԱՁ-ի կողմից տրված և Ստեփանավան համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 43-րդ հոդվածով, «Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարությանն 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, քաղաք Ստեփանավան Արևելյան փողոց 61 հասցեի անշարժ գույքի կադաստրային ծածկագիրը, որը համաձայն կադաստրային քարտեզի գտնվում է 06-007-0335-0016 կադաստրային ծածկագրում:
2. Հաստատել բնակավայրերի բնակելի կառուցապատման 06-007-0335-0016 կադաստրային ծածկագրի հողամասի սահմանային չափերը և մակերեսը համաձայն «Սամվել Ֆրանգյան Կամսարի» ԱՁ կողմից կազմված՝ համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծի, ըստ որի հողամասի մակերեսը կազմում է 0.00367 հա:
3. Կատարել ճշտված կադաստրային ծածկագրով, մակերեսով և սահմանային չափերով հողամասի տեղադիրքի ուղղում՝ համաձայն «Սամվել Ֆրանգյան Կամսարի» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

4. Հիմք ընդունելով Ստեփանավան քաղաքի գլխավոր հատակագիծը, ՀՀ կառավարությանն 29.04.2021թ. կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման կարգը հաստատելու մասին թիվ 698-Ն որոշումը, ՀՀ Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, քաղաք Ստեփանավան Արևելյան փողոց 61 հասցեի 06-007-0335-0016 կադաստրային ծածկագրի, ճշտված տեղադիրքով, սահմանային չափերով, կադաստրային ծածկագրով և մակերեսով, 0.00367 հա հողամասի նկատմամբ ճանաչել Թորգոմ Գաբրիելի Մոսինյանի սեփականության իրավունքը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 սեպտեմբերի 2025 թվականի N 1085

ՄԱՐԶ ԼՈՌԻ, ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԴՈՒՐՅԱՆ ՓՈՂՈՑ 22Ա ՀԱՍՑԵՈՎ, 06-007-0009-0032 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԵՐԿՈՒ ՄԻԱՎՈՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նիկոլայ Ալեքսանդրի Աղաջանովի և Ալլա Ալեքսանդրի Զոհրանյանի լիազորված անձ Անահիտ Սամվելի Դավոյանի կողմից 10.09.2025թ. ներկայացված թիվ 2107 դիմումը, 31.01.2005թ. տրված N 2136816 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «Սամվել Ֆրանգյան Կամսարի» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագծերը, 30.07.2025թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը՝ նոտարական ակտի կոդ 863-20250602-84-9051852 և 863-2025-0602-84-9051866 , 04.03.2024թ. տրված լիազորագրերը՝ նոտարական ակտի կոդ 763-20240304-90-7747231 և 763-20240626-90-8073259, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին քաղվածքը՝ ծածկագրեր 06011GHKG2EX և 06011SXJ6YTG ղեկավարվելով՝ ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշմամբ, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 27.04.2006թ. թիվ 570 Ն որոշմամբ և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, Ստեփանավան Դուրյան փողոց թիվ 22ա հասցեով, 06-007-0009-0032 կադաստրային ծածկագրի տակ գտնվող, անշարժ գույքի տարանջատման արդյունքում առաջացած անշարժ գույքերի նոր փոստային հասցեները և հողամասերի մակերեսները, համաձայն «Սամվել Ֆրանգյան Կամսարի» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծերի.

ա) 0.055 հա մակերեսով ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող Ալլա Ալեքսանդրի Զոհրանյանին պատկանող 99.89 քմ մակերեսով բնակելի տան փոստային հասցեն՝ ՀՀ մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, քաղաք Ստեփանավան Պ. Դուրյան փողոց 22/1:

բ) 0.055 հա մակերեսով ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող Նիկոլայ Ալեքսանդրի Աղաջանովին պատկանող 289.82 քմ մակերեսով բնակելի տան փոստային հասցեն՝ ՀՀ մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, քաղաք Ստեփանավան Պ. Դուրյան փողոց 22/2:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 սեպտեմբերի 2025 թվականի N 1086

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, ԱՄԵՐԻԿԱԿԱՆ 2/4 ՀԱՍՑԵՈՎ, 06-007-0101-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 2-ՐԴ ՀԱՐԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 82.8 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լիզա Հովսեփի Շարբաթյանի կողմից 15.09.2025թ. ներկայացված թիվ 2142 դիմումը, 29.07.2005թ. թիվ 1263650 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականը. անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին քաղվածքը՝ ծածկագիր 06011FCBCVSZ ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Լոռու մարզ, ք. Ստեփանավան, Ստեփանավան Ամերիկական 2/4 հասցեով, 06-007-0101-0009 կադաստրային ծածկագրով Լիզա Հովսեփի Շարբաթյանին համասեփականատիրության իրավունքով պատկանող, 2-րդ հարկում գտնվող 82.8քմ մակերեսով բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան ք. Ստեփանավան, Ամերիկյան թաղամաս 2 շենք 4 բնակարան:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 սեպտեմբերի 2025 թվականի N 1087

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՔԱՂԱՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՍՑԵՈՎ 06-007-0103-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0.07726 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԳԵՈԿԱԴ» ՍՊԸ -ի կողմից տրամադրված տեղագրական հատակագիծը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին քաղվածքը՝ ծածկագիր 06011NQEUCSV ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, քաղաք Ստեփանավան հասցեով 06-007-0103-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված 0.07726 հա մակերեսով անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան, քաղաք Ստեփանավան Դեսինի փողոց 15/4 հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 սեպտեմբերի 2025 թվականի N 1088

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, ՔԱՂԱՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 51-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՈՎ 06-007-0724-0013 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Նումինի Գրիգորյանի կողմից 01.09.2025թ. ներկայացված 2016 դիմումը, 12.06.2009թ. տրված թիվ 2487193 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին քաղվածքը՝ ծածկագիր 06022APF4MCN ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, քաղաք Ստեփանավան 51-րդ թաղամաս հասցեով 06-007-0724-0013կադաստրային ծածկագրում գտնվող անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, Արմանիս 3-րդ փողոց 16 հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» սեպտեմբերի 2025 թվականի N **1089**

ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավանի համայնքապետարանում համայնքային ծառայության նշված թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացնել մրցույթներ.

Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաքաշինության, հողաշինության և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ծածկագիր (2.1.-1) 24.10.2025թ., քաղաքաքաշինության, հողաշինության և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետի՝ ծածկագիր (2.3.-2) 24.10.2025թ., քաղաքաքաշինության, հողաշինության և շրջակա միջավայրի պահպանության բաժնի առաջատար մասնագետի՝ ծածկագիր (3.1.-15) 28.10.2025թ.:

2. Մրցույթների անցկացման մասին տալ հայտարարություններ www.ardarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և այդ մասին երկօրյա ժամկետում տեղեկացնել Լոռու մարզպետարանի աշխատակազմին:
3. Մրցույթային հանձնաժողովի լիազորված անձ նշանակել համայնքապետարանի աշխատակից՝ Տաթևիկ Խառատյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ